

6094



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 067 - 24

Նախաձեռնող՝

«Վ.Ս.» ՍՊԸ

Սուրբ Գրիգոր Լուսավորչի փ./6/12/3բն.

Գործունեությունը՝

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան,
Լենինգրադյան փողոց հ. 23/19 հողամասում
բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում
ք..երևան , Լենինգրադյան փողոց հ. 23/19 հողամաս:

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 067 - 24

«30» Մայիսի 2024թ.

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Լենինգրադյան փողոց հ. 23/19
հողամասում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում:

Նախաձեռնող՝	«Վ.Ս.» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Լենինգրադյան փողոց հ. 23/19 հողամաս

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված նախնական գնահատման հայտով գործունեությունն իրականացվելու է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց հ. 23/19 հողամասում:

Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել բնակելի համալիրի նախագծային փաստաթղթերը՝

- համալիրի տեղամասի ինժինեռաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,

- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,

- սեփականության վկայականը՝ N 02022023-01-0007

- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 01/18-0712-Դ-123003-752 տրված՝ 25.10.2023թ.:

- հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, իրավունքի տեսակը սեփականություն:

Նկարագրական մաս. Հողամասի մակերեսը 0,3 հա է՝ կառուցապատումից ազատ տարածք՝ շրջապատված նոր կառուցվող բարձրահարկ շինություններով: Կից գտնվում են՝ փողոցներ, բնակելի և հասարակական տարածքներ: Համաձայն



Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ հանույթ՝ 25750.0մ³, որից հետլիցքի համար օգտագործվելու է 5500.0մ³: Մնացած 19450,0մ³ հողային զանգվածը տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակը ամբողջ տարածքն է: Շինհրապարակում լինելու են

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն, շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, փակ պահեստ/24.3մ²/, աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ/24մ²/, հանդերձարան, սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան, ցնցուղարան,

- բիոզուգարան՝ 2 հատ,

- շինհրապարակում լինելու են նաև 1 հատ 7,30x3.0 մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ,

- հակահրդեհային վահանակ, 2 շանթարգել: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ: Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 200 մ³ ծավալով:

- կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 7800 կգ/տարի, շահագործման փուլում՝ 741,7 կգ/տարի:

Որոշ թափոններ (ներկեր, կարծրացված սոսինձ, սև մետաղի, պղնձի, ալյումինի, սոսնձի և այլն) քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերպության կողմից, ելնելով փաստացի արդյունքներից:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային



Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Ապահովել պահանջների կատարումը աշխատանքները սկսելու պահից:
- Հողային աշխատանքների իրականացման ընթացքում սահմանել մասնագիտական հսկողություն տարածքում հնարավոր Կարմիր գրքին պատկանող բուսական և կենդանական տեսակների հայտնաբերման, պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության նպատակով՝ համաձայն գործող իրավակարգավորումների:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:
- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, համաձայն բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները՝
- Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:
- Շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.
- Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.
- Կանաչապատումը կատարել Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լենինգրադյան փողոց հ. 23/19 հողամասում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Շուշանիկ Կարապետյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան